


# ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

## ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ՀԱՆՐԱՔՎԵ. ԻՆՉ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱՆ



### ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2020 թ. փետրվարի 6-ին Ազգային ժողովի որոշմամբ հանրաքվեի է դրվել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ) և ՀՀ նախագահի հրամանագրով հանրաքվեն նշանակվել է 2020 թվականի ապրիլի 5-ին:

Նկատի ունենալով Սահմանադրության՝ որպես բաժրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտի փոփոխությունների կարևորությունը, ներկայացնում ենք իրավական ակնարկ՝ հանրաքվեով Սահմանադրության փոփոխությունների ընդունման մասին:

Նախագծի 1-ին հոդվածի առաջին մասով նախատեսվում է, որ հանրաքվեի դրված ակտի ընդունման դեպքում մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահի և անդամների պաշտոնավարումը դադարում է, այլ կերպ ասած Սահմանադրական դատարանի գործող կազմի 9-ը դատավորներից 7-ի լիազորությունները դադարում են:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ


Հանրաքվե բառը ծագում է լատիներեն «refero» բառից, որը նշանակում է վերադարձնել, կազմված է «fero»՝ «բերել» արմատից ու «re-» նախդիրից, որն այստեղ նշանակում է «հետ»։ Հանրաքվեն՝ որպես ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացում, սկզբնավորվել է Շվեյցարիայի Գրուբունդեն մարզում դեռևս 16-րդ դարից։



Այս ինստիտուտը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովուրդը այդ իշխանությունը իրականացնում է ազատ ընտրությունների, **հանրաքվեների**, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով։

## ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Նախագծի 1-ին հոդվածի երկրորդ մասի



համաձայն՝ հանրաքվեի դրված ակտի ընդունման դեպքում Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները հաջորդաբար կատարելու են՝

- ՀՀ Կառավարությունը,
- ՀՀ նախագահը,
- Դատավորների ընդհանուր ժողովը։

Առաջացած թափուր տեղերը համալրելու

ժամկետները և այլ մանրամասները սահմանվելու են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով՝ հանրաքվեի ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսյա ժամկետում։

Ինչ վերաբերում է հանրաքվեի դրված ակտի ընդունմանը, ապա ՀՀ Սահմանադրության 207-րդ հոդվածի համաձայն՝ *հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը:*

Հայաստանում, 2018 թվականի տվյալներով<sup>1</sup>, քվեարկելու իրավունք ունի 2 մլն 574 հազար 916 մարդ, որի մեկ քառորդը կազմում է 643 հազար 729 ձայն: Այսինքն, որպեսզի հանրաքվեի դրված ակտն ընդունվի հարկավոր է մոտ 650 հազար կողմ ձայն կամ «Այո» վավեր քվեաթերթիկ:

Հանրաքվեի արդյունքների վերաբերյալ առաջին նախնական տվյալները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ «ԿԸՀ») հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում է քվեարկության ավարտից ոչ ուշ, քան **24 ժամ հետո**<sup>2</sup>:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ **յոթերորդ օրը**, ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում է հետևյալ որոշումներից մեկը<sup>3</sup>՝

- հանրաքվեի դրված ակտի ընդունման մասին.
- հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.
- հանրաքվեի դրված ակտը չընդունելու մասին.
- հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու և նոր քվեարկություն նշանակելու մասին<sup>4</sup>:

Հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի լուծումը վերապահված է Սահմանադրական դատարանին, որին այդ հարցով իրավասու է դիմել միայն Ազգային ժողովի խմբակցությունը<sup>5</sup>՝ հանրաքվեի արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ հինգերորդ օրը, մինչև ժամը 18:00-ն:

### ***Ժամանակագրական առումով ունենք հետևյալ պարկերը՝***

1. ապրիլի 5՝ հանրաքվեի անցկացման օր,
2. ապրիլի 12՝ ԿԸՀ-ի՝ արդյունքների մասին որոշման կայացման օր

<sup>1</sup> ՀՀ ընտրողների քանակի վերաբերյալ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ N-22-90204 գրություն

<sup>2</sup> «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>3</sup> «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մաս:

<sup>4</sup> «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>5</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մաս:

3. ապրիլի 17-ը, մինչև ժամը 18:00-ը Ազգային ժողովի խմբակցությունը ԿԸՀ-ի կողմից կայացված որոշումը կարող է բողոքարկել Սահմանադրական դատարան
4. Սահմանադրական դատարանը, տվյալ դեպքում, պարտավոր է վեճի կապակցությամբ որոշում կայացնել դիմումը մուտքագրելու օրվանից 50 օրվա ընթացքում, որը ՍԴ աշխատակարգային որոշմամբ կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 30 օրով:



Քննելով առկա վեճը, Սահմանադրական դատարանը կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը թողնում է ուժի մեջ, կամ անվավեր է ճանաչում հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը և հանրաքվեի դրված նախագիծը համարում է ընդունված կամ անվավեր է ճանաչում հանրաքվեի արդյունքները:

### **ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն Սահմանադրության փոփոխություններն օրինական ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

1. Պաշտոնական հրապարակումն իրականացվում է ՀՀ պաշտոնական տեղեկագրում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ ԿԸՀ-ի որոշումը հրապարակվելուց հետո 8-րդ օրը<sup>6</sup>, եթե այդ որոշումը չի բողոքարկվել Սահմանադրական դատարան:

<sup>6</sup> «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մաս:

**Տվյալ դեպքում պաշտոնական հրապարակումը կիրականացվի ապրիլի 20-ին և Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ կմտնեն ապրիլի 21-ին:**

2. Այն դեպքում, երբ ԿԸՀ-ի՝ հանրաքվեի արդյունքների վերաբերյալ որոշումը բողոքարկվել է Սահմանադրական դատարան, ապա հանրաքվեով ընդունված իրավական ակտի պաշտոնական տեղեկագրում հրապարակումն իրականացվում է Սահմանադրական դատարանի՝ *հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումն ուժի մեջ թողնելու մասին Սահմանադրական դատարանի որոշումից հետո ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:*<sup>7</sup>

Այս դեպքում Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ կմտնեն վերոնշյալ ժամկետում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ծանուցում. Այստեղ ներկայացված մտքերը չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատավություն**

**Հելեն Ավետիսյան – Կրտսեր իրավախորհրդատու**  
[havetisyan@tk.partners](mailto:havetisyan@tk.partners)



<sup>7</sup> «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մաս: